քար գնելու է։ Եւ դիտելու է որ ջուրը եփ չելլէ. անոր համար նայէ որ կրակին վառուածքը միշտ հաւասար ըլլայ։ Եւ այս գործողութիւնը այնչափ ատեն պէտք է որ քշէ, ինչուան որ տաշտին երկըլթէ զօտին այնչափ տաքնայ՝ որ չկարենաս ձեռք դպցնել. որ է ըսել առաւելն երկու ժամի չափ։ Անկէ ետև կը բանաս տաշտին բերանը, կը մարես կրակը. և ուրիշ բան չմնար ընելու՝ բայց եթէ օճառով լուանալ այն մասերը՝ որոնց որ աղտի բծերը բոլորովին չեն ելած։

Մ՚ամլելու (խութիւ ընելու) լաթերը առաջուց պէտք է՝ օսլայել. որ թէպէտ սովորական բան մըն է բայց քանի մը հարկաւոր գիտելիքներ կան, զորոնք պէտք է բացատրել։ Սովորաբար ցորենի օսլայ կը գործածեն, որուն մէջի մածուցիկ հիւթը լաթը շուտ կը փտեցնէ, անոր համար աւելի գետնախնձորէն շինածը պէտք է գործածել, որ չունի այն ցորենին մածուցիկ վնասակար հիւթը։ Ոմանք դիւրութեան համար օսլան կը հարեն պաղ ջրով առանց եփելու, որ ամենևին լաթին մէջ չթափանցեր, և տաքցուցած մամլակով մամլակելու ատեն հաւասար չշտկուիր լաթին երեսը։ Ուստի պէտք է գիտնալ որ՝ լաթը աղէկ օսլայելու համար, օսլան թէ ցորենի ըլլայ և թէ գետնախնձորի, պէտք է հարել քանի մը դդալ պաղ ջրով ու ետքը եփ հանել. ուրիշ ամանով մ՚ալ մաքուր ջուր մաքուր ամանի մը մէջ եռացնել, ու այն եփած օսլան քիչ քիչ վրան լեցընել խառնելով, և այնպէս խառնելով եփել ինչուան որ սկսի թանձրանալ։ Ետքը պէտք է վրան պաղ ջուր լեցընել խառնելով՝ նոյն եփածին քանակութեանը չափով. ու բարակ լաթէ անցընել՝ որ մէջը կունտեր չմնան, ու այնպէս գործածել։ Բայց այսպէս տաք ալ կրնայ գործածուիլ չիտակ կենալու լաթերուն։

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ

ԱՆԻ

Դ. ԵԿԵՂԵՑԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ. — Եկեղեցին յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին յարևելից հարաւոյ կայ նախագրելոյդ 'ի ծայր զառիվայրին որ տանի յԱխուրեան գետ։ Զսա շինեալ է Տիգրան ոմն Սմբատեանց 'ի Թուին ՈԿԴ որպէս յայտ առնէ արձանագիրն ընդարձակ։ Ա՛յլ է 'ի սմանէ սուրբ Գրիգոր յիշատակեալն յԱսողկայ և 'ի Կիրակոսէ, զորմէ բանք լիցին զկնի։ Ցեկեղեցեացն Անւոյ սա միայն անարատագոյն մնացեալ է ամենայն մասամբք ներքոյ և արտաքոյ հանդերձ կաթողիկէիւն։ Առ խորանաւն երկուստեք մատրունք են. լայնութիւն եկեղեցւոյն ընդ հիւսիս և ընդ հարաւ անձուկ է տարածութեամբ. որմասիւնքն հանդերձ կամարագօտեօք իւրեանց և թևոցն և խորանին ամբառնան 'ի վեր զգմբէթն. իսկ տարածութիւնն որ զկնի կամարասեանցն՝ անձկագոյն ևս է քան



Ս. Լուսաւորիչ Անւոյ.

զթեւոցն։ Նկարէն պատկերք դեռ ևս անարատ կան յորմունսն մեծաւ մասամբ։ Արտաքոյ եկեղեցւոյն գաւիթ կայր սիւնազարդ և կամարաշէն. այլ արդ կործանեալ կամարին՝ սիւնքն միայն կան՝ի տեղւոջն։ Իսկ յալմէ գաւթին այլ մատուռն է, որոյ կործանեալ՝ կամարին որմունքն ևեթ մնացեալ են։ Եկեղեցիս թէպէտ և փոքր է, սակայն՝ի պատիւ անուան սրբոյն մեծագին սպասուք ճոխացեալ էր՝ի շինողէն, և շուրջանակի վանականաց բնակարանք անուանի եղեալ, հասոյթս ըստ նմին համեմատութեան հաստատեալ վասն նորա՝ի նմին Տիգրանայ, որպէս վկայէ լիով արձանագիրն։ Յետ իբր հարիւր ամաց անցանելոյ՝ի շինութենէ անտի, չգիտեմ ուրպէս, անց՝ի ձեռս վրաց, զոր օրինակ պատմէ երկրորդ արձանագիրն, որ և յայտ է՝ի յոյն և՝ի վրացի գրութեանցն՝ի ճակատ դրանն։ Իսկ բնակարանք վանականացն և իշխանաց զոր ասեն, ոչ ևս երևին. զի՝ի հիւսիսոյ նորա քարակոյտք աւերակաց խառն հողով և խճով դիզեալ բլրացեալ են այնքան՝ մինչև հաւասարել բարձրութեան եկեղեցւոյն։ Յարևելից նորա



Երևին մնացորդք կամարակապ ներքնատան թաղեալ 'ի գետնի հաւասար հողոյ. կամ լաւ ևս ասել աւերակք հիւսիսակողմանն իջեալ ծածկեալ են զնա։ Արձանագիրս 'ի հարաւոյ է արտաքուստ։

✠ Թվ. ՈԿԴ. Շնորհիւն եւ ողորմութեամբն Յոյժամ տիրեց քաղաքիս անոյ։ Հզաւր եւ տիեզերակալ ամիր ըսպասալար եւ մանդատուր Թախուցէս զաքարիայ եւ որդին նորա շահնշահ եւ տիգրան Ծառայ Յոյ որդի սմբատաւրենց սուլեմա։ Յազգէ հոնենց վասն յերկար կենդանութեան տանց

իմոյ եւ որդւոյ Նոյայ շինեցի զվանքս ս՟բ գրիգորոյ որ 'ի հինն մատուան ա՟ծածին կոչիւր որ էր քաղաքին եւ մացաւ տեղի աէտ զոր իմ հալալ գանձով գնեցի 'ի հերէնէտիրաց եւ բազում աշխատութեամբ եւ գանձով պարսպեցի շուրջանակի շինեցի զեկեղեցիս յանուն ս՟րյն լուսաւորչին գրիգորի եւ զարդարեցի բազում զարդիւք փրկան նշանաւք ս՟բ խաչիւ ոսկիք եւ արծաթիք եւ պատկերագործ խատերով զարդարել ոսկով եւ արծաթով եւ ակամբք եւ մարգրտաւ եւ կանթեղաւք ոսկի եւ արծաթի եւ նշխարաւք ս՟րց առաքելոց մարտիրոսաց եւ մասամբ ա՟ծընկալ եւ տէրունական խաչին եւ ամենայն ցեղ սպասք յոսկո եւ արծաթոյ եւ բազում զարդաւք շինեցի զամենայն ցեղ զընակարան վանականաց եւ իշխանաց եւ կարգեցի 'ի սմայ քահանայք պատարագողք մարմնոյ եւ արեննն ք՟ի որ անխափան պատարագ մատչի վասն արեւշատութեան տանց իմոց շահնշահի եւ որդւոց իւրոց եւ վասն թողութեան մեղաց իմոց եւ ետու ընծայս 'ի վանքս ս՟բ գրիգորոյ հայրենիք զոր գնել էի գանձով եւ վճռամբ հայրենէտիրաց եւ զոր ես 'ի հիմնէ շինել էի զայսոսիկ գաւռոխոնեց գեղին կէսն քարհտին ե՟ դանկն մշակունեց կէսն կապղուցն կէսն ցամաքծո՟մն բոլոր խուզած մահմունդի կարուց յերկիրն ու ցընդոյ բ՟ դանգն խաչորկանն եւ փնդուկն 'ի քաղաքիս, հայրենիք բաղնիսն ու մին 'ի մոդանի սխանապատն կուղպակնո՟մն ու կամարակապ փնդուկն ու մարագն հետ բաղնեցն տ՟ր սարգսի ախոռն ու մարագն զոր գնեցի կալն եւ բ՟ ակն ձիթահանք եւ ախոռնի ու մարագնի վանիցս 'ի դռանս վանիցս առջեւ պահէզն ու լանջն ինչուրվլի գլխձորի դուռն ինչվլի գեսն ու գետեզերն պահէզն զոր գնել էի եւ շինել դ՟մնադռաննն կէս ակն ջաղաց թարփ մի բոլոր ու մին այլ թարփին շա՟բ բ՟ աւր գլխձորին ջաղաց ա՟ թարփն շա՟բ բ՟ աւր 'ի բէշքէնակապէն ինչուրվլի կարմունջն գետին կէսն իմ գնած է պապենց խանաբարն դ՟ դանգն ու դուան կուղ-

պակն բոլոր տներ հատէցոնց զուկակի քաղաքիս դռանս բա-
զում հողեր գնած այգի ՝ի յերեւան այգի ՝ի յոշական այգի
՝ի կոշ էգի ՝ի յարուճ որ սազոտն կոչի այգի ՝ի ՝ի մրեն այգի
՝ի ՝ի ծմակին որ կաթողի հող կոչի զայս որ գնած է եւ այլ
բազում գրաւկնած էր զոր ոչ արձանագրեցի վանացս էի
տվել ու թէ տէրքն թափեն ոսկին վանացս զոր ուրիշ իմ
անդարձագրին եմ գրել եւ զվանքն բեխենց կոչեցել զոր
ես շինեցի եւ նորոգեցի ընձայաւք փարթամացուցի ամէ-
նոքն սուրբ գրիգորոյ վանացս հոգացողս հոգայ զորպիսու-
թիւն արդ էթէ ոք ՝ի մեծաց կամ ՝ի փոքունց յիմոց կամ
աւտարաց զոր ինչ արձանագրիս է խաբանել ջանա կամ թէ
իրք շորթէ յարդենցս որ ՝ի սմա հաստատել է կամ զյիշա-
տակ զմեղուցել ծառայս ՝ոյ խաբանէ զինչ եւ իցէ պատճա-
ռաւք այնպիսին ուրոշել լինի փառացն որդոյն ՝ոյ եւ զպա-
տիժս կաենի եւ զյուդայի ժառանգեսցէ ՝ի գլուխ իւր եւ
երեք ՝որ ժողոյն եւ թ դասուց հրեշտաց նզովել եղիցի եւ
մեր մեղացս համարս տացեն առաջի ՝ոյ եւ կամարարքն եւ
հաստատուն պահողքն աւրհնին յ՝ոյ ✠ ԻՂ ԳՁ

Յարևելից կուսէ.

թվ. ՁԾԹ. աթապագի ամիր սպասալար շահանշահի մծիկ-
նաւ բարթուխուցէս մաթէս եւ իմ կենայկիցս թէնի եւ իմ
եղբէր մարկոս յայսժամս որ պարոն ողորմեցաւ զվանքս մեզ
էրետ վաղ բարեպաշտ տիգրան ջուր էր բերել ՝ի վանքս ու
՝ի յանտիրուութենէ խաղտել էր ու կտրել մեք վան արեւ-
շատութեան պարոն շահանշի եւ խուանդզին եւ իրենց որ-
գուն զաքարի եւ վան մեր հոգուս յիշատակ բերաք զջուրս
եւ հաստատեցաք յիշեցէք ՝ի քՀ.

Վերոյ դրանն աղեղնաձև երկտող յոյն և վրացի ներկագիր.

..... Κύριε ἠγάπησα εὐπρέπειαν ὄικου σου καὶ τόπον σκηνώματος δόξης σου.

որ է Սաղմոսն. Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո և զտեղի յարկի փառաց քոց։

ესე არის ბჭე უფლისაჲ და მართალნი შევლენან ამას შინა.

այսինքն է. Այս դուռն Տեառն է, և արդարք մտանեն ընդ սա։

Դ. ԵԿԵՂԵՑԻ։ — Այս եկեղեցի յարևելից կայ նախընթացիդ և հեռի 'ի նմանէ և մօտ առ գետեղրն. անծանօթ է յանուանէ, զի չունի և ոչ մի արձանագիր։ Հիանալի է հոյակապ և մեծագործ ճանապարհն որ տանի անդր. զի 'ի վերուստ մինչև յեկեղեցին զառիվայր ճանապարհն առհասարակ ամրափակեալ է երկուստեք որմով, վերոյ կամարակապ և ստորև աստիճանք սանդղոց, ամենայնն քարակերտ. ոչ ուղղագիծ ձգեալ այլ խոտորնակի յայլ և այլ կողմանս մինչև յեկեղեցին. առ ամրութեան մեծի շինուածոյն արդեօք զայդ օրինակ արհեստաւորեալ, թէ առ փոքր մի մեղմելոյ զառիվայր դժուարութիւնն՝ չունիմ ասել։ Ուրեք ուրեք լուսամուտք բացեալ են յորմունսն, մանաւանդ յանկիւնս իւրաքանչիւր խոտորմանցն. մօտ եկեղեցւոյն իբրու քարընկէցիւ և աւելի անցեալ ընդ դուռն մի լայնանայ ուղին, և որմունքն երկուստեք քաջ քան զճանապարհին մնքուրք են և քարինքն սրբատաշք, թէպէտ և յարկ նորա կործանեալ, որպէս և բազում ուրեք կամարք ճանապարհին խաթարեալք։ Ի ծայր վերջնոյ ճանապարհիդ կառուցեալ է եկեղեցին ամենափոքր 'ի վերայ քարափանն որ հայի 'ի դետն կոյս. դմբէթ նորա և ամենայն կողմանքն ներքոյ և արտաքոյ անարատ կան ցայսօր։ Եւ են դռքա երկու մատրունք կից առ միմեանս համակ 'ի կարմիր քարանց աղիւսագոյն. մի մի խորանք 'ի ներքս, զի անձկութիւն տեղւոյն չտանի այլ ինչ։ Զիր ուրեք յիշատակութիւն 'ի գիրս ոչր չինուածք են և որոյ հրամանաւ. և զարմանս է ինձ թէ էր աղագաւ այնքան դանձ սպառեալ 'ի կերտուած ճանապարհին և կամարաց նորա, և զեկեղեցին մատրանաչափ սահմանեալ։ Ասանդութիւն 'ի բերան ռամկին է, եթէ արժան իցէ հաւատալ ամենայն զրուցացս, թէ 'ի պէտս դստեր թագաւորի յօրինեալ իցէ այդ ամենայն. այլ թէ ոչր 'ի թագաւորաց ոչ ոք գիտէ։ Այս ևեթ յայտնի է զի յարևելից կուսէ առընթեր եկեղեցւոյն երևին մնացորդք որմոց բնակարանի իրիք, զորմէ ասեն թէ պալատ էր նորին դստեր թագաւորի։ Իսկ քարակոյտ աւերակաց վայրաց անբաւ է. զարմանք այն են զի եկեղեցին զերծ կայ տակաւին յանգութ ձեռանէ՝ 'ի բռնութենէ տարերացն կացեալ աննկուն։